

ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ԶԱՅԵՐԷՆ ՉԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ի ՎԵՆԵՏԻԱ. Հատոր Դ.—Շարակնոց-ճաշոց-ժամագիրք, Խորհրդատետր-Ման-
րուսմունց-կցուրդ. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմենեան՝ Մխիթարեան ուխտէն,
Վենետիկ—Ս. Ղազար, 1993, Խէ էջ, 1234 սյուն, 10 էջ տախտակ. Հատոր Ե.—
Յայտատուրք-Դանձարան-Տաղաւրան-Տօնացոյց. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմ-
ենեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ—Ս. Ղազար, 1995, ԺԸ էջ, 1276
սյուն.

Ընդհանուր հաշվով 1330 մեծագիր էջ ունեցող՝ սովոր և ամենայն խնամքով ու մաքրու-
թյամբ տպւած այս հատորներն¹ ընթերցողին աւելիս են մասնագիտական հաճույքի, հրճվան-
քի, գոհունակության և՛ կազմողի ու հրատարակողի նկատմամբ, ևրախտագիտութեան զգա-
ցումներու Սրանց հրատարակվելու փաստն ապացուցում է, որ նախ՝ հայերեն ձևագրերի ճո-
խությամբ ևրրող (Երեանից և Երուսաղէմից հետո) հավաքածուի ցուցակագրութիւնը, որ
սկսվել էր զարիս սկզբին, բավական անական ընդհատումից հետո, շարունակվում է պատշաճ
մակարդակով ու բարեխղճութեամբ. ապա՝ որ սրանով հայերեն ձևագրական հավաքածուներից
որակով ևրերից մեկը ևղող վենետիկյան ընտրելագույն մատենադարանի շուրջ 3200 մատ-
յաններից ևս 415-ի (269 և 146. սրանցով իսկ՝ ամբողջի ավելի քան բաւոր դասի՝ 871 միա-
վորի) բովանդակութիւնն ու էութիւնը հասու է դառնում մասնագետներին: Կարևոր է նաև
այն փաստը, որ, նախորդների հետ միասին, այս հատորներն արդեն ներկայացնում են հայոց
ծիսական մատյանների՝ «հայ եկեղեցւոյ ծիսակատարութեան» (Դ, էջ Ա) հայոց վենետիկյան
ամբողջ ժողովութիւնը:

Այս հանգամանքն էական է թվում առաջին հերթին այն պատճառով, որ շուտով գալու
է հերթը այն ժողովածուներին, որոնք պարունակում են մեր ինքնուրույն ու թարգմանական
մատենագրութեան բոլոր ճյուղերին վերաբերող հւշարձանները և որոնց հավաքման համար
միարանութիւնն ու նրա առանձին անդամները ծրագրված ջանքեր և գործադրել ԺԸ-ԺԹ
դարերի ամբողջ ընթացքում (մխիթարյան ձևագրական հավաքածուի որակը պայմանավոր-
ված է առաջին հերթին հոգևոր ու աշխարհիկ նյութեր պարունակող ժողովածուներով): Նույն
այդ որակի և որոշ այլ հանգամանքների թելադրանքով հարկադրված ենք լինելու ևրման
շնորհիւ գրախոսութիւնների սովորական կազմաւարային շաղկից, անելով անհրաժեշտ թվա-
ցող պարզաբանումներ և քննարկումներ:

Դ հատորի «Յառաջարանի» առաջին իսկ էջում հեղինակը հայտնում է, որ այն դեռևս
25 տարի առաջ կազմված է եղել վենետիկյան ցուցակի նախորդ հատորների (տաշյանական)
ոճով և որ դրանից հետո ևրեան է եկել Մաշտոցյտն Մատենադարանի առաջադրած նորագույն
ևղանակը, ըստ որի վերանայելու դեպքում ներկա հատորի ուշացած տպագրութիւնն ավելի էր
ուշանալու:

Առիթն օգտագործելով և մի փոքր շնորհիւ, հնարավոր համառոտութեամբ պարզաբանենք
Մատենադարանի նորագույն ևղանակը, որ, ըստ էութեան, նույն տաշյանական սկզբունքի դար-
գացումն է՝ հարցակարդի որոշակի հստակեցում, վերախմբավորում (մանրանկարչութեանը
վերաբերողների ի մի բերում), փոքր լրացում («Կնքագրոշմ», «Մածկաղիր», «Գրչափորձ» հար-
ցերը) և, որ առավել էականն է, ձևագրի մեջ առկա բոլոր գրատեսակների (բոլոր ձևերի
արտագրանքների) բնական շափով լուսանկարային վերարտադրութիւն: Էական է նաև թի մի

¹ Նախորդներն են. Մայր ցուցակ հայերէն ձևագրաց մատենադարանին Մխիթարեանց
ի Վենետիկ. հ. Ա, Յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան, Վենետիկ, 1914, հ. Բ. Յօրինեց հ. Բ. վ.
Սարգիսեան, Վենետիկ, 1924, հ. Գ, Յօրինեցին հ. Բ. վ. Սարգիսեան և հ. Գ. վ. Սարգսեան,
Վենետիկ, 1966 (այսուհետեւ, շարադրանքի մեջ, ըստ հարկի, ամբողջ հատորաշարը, անհրա-
ժեշտ էլահամարներով հանդերձ, հիշատակելու ենք Ա, Բ, Գ, Դ, Ե համառօտ ձևով):

² Հմմտ. Ա. Մ ն ա ց ա կ ա ն ւ ա ն. Ներածութիւն.—Մայր ցուցակ հայերէն ձևագրաց
Մաշտոցի անուան Մատենադարանի. հ. Ա, Երեան, 1984, էջ ԽԸ: ՄԲ:

տփի՝ մի կաղմի մեջ հավաքված, տարբեր ժամանակներում և տարբեր ձևերով ստեղծված ձեռագրերի մասերի հստակ սահմանադրությունը և նույն գույքահամարի ներքո իրեն տարբեր ձեռագրերի (Ձեռագիր Ա, Ձեռագիր Բ և այլն) ներկայացնելը: Առանձին ուղագրություն է հատկացված հարցերի հստակությանը, ըստ այդմ՝ նաև նրանց տրվող պատասխանների միօրինակությանը (պատմողական եղանակից հնարավոր չափով խոստովելու): Վերջին հանգամանքը կարևոր և օգտակար է այն իմաստով, որ նոր տպվող մեր ձեռագրացուցակներն արդեն պատրաստվում են համակարգչային եղանակով, նույն եղանակով և նույն հիմքի վրա մոտ ապագայում պետք է սկսվեն նաև ձեռագրագիտական հետազոտություններ, իսկ մեքենայական եղանակով դասակարգումներն առավել ճշգրիտ ու հստակ են արվում իսկապես միօրինակ հարցերով և նույնպիսի պատասխաններով: Հական հատկանիշ է նաև ցանկերի հարստությունը: Վաստակաշատ բանասեր Օ. Եզանյանի մտահղացմամբ ստեղծվել են ձեռագրացուցակների համար բոլորովին նոր՝ աննախադեպ ցանկեր: Նախագաղափար եւ հետագայ յիշատակարանների, Գրչուքեան վայրերի, Գրիչների, Մաղկողների, Կաղմողների, Պատուհարատու ստացողների, Մանրանկարների, Կենդանիների, Պատմագրությունների, Ունեցող ձեռագրերի, Եւ մի տփի ձեռագրերի, Մետաղէ կրկնակաղմեր, խաչեր եւ այլ գրագրեր ունեցող ձեռագրերի, Պատուհիկ-պահպանակների: Այսօր՝ պատճառաբանելով, թե սրանց մեծ մասն արտածված են Անձնանունների և Տեղանունների ընդհանուր ցանկերից, որոշ անհատներ չեն ընդունում նրանց անհրաժեշտությունը, բայց համոզված ենք, որ կրկնությունն այստեղ սոսկ ձեռնարկ է: Իրականում այս ցանկերից ամեն մեկը հետազոտությունների մի նոր ապարանգի նախապատրաստական աշխատանք է:

Հասկանալի է, որ եթե պահանջների այս ամբողջության համեմատ հնուց կաղմված որեւէ ձեռագրացուցակ վերաձեւելու հարկ լիներ, ապա անկասկած է, որ նրա տպագրությունը կարող էր ուշանալ գոնե մի հնգամյակով ևս (գիտենք, որ ցուցակիս տպագրությունը տեւել է շուրջ չորս տարի): Ըստ այսմ՝ կաղմողն իրավացիորեն չի արել այդ: Բայց կողմնայինը հավատալ, որ Վենետիկի միսթարյան ձեռագրացուցակի հաշորդ հատորները պատրաստվելու են նորագույն եղանակով, որ արդյունք է Երեւանի Մատենադարանի մասնագետների շուրջ Երեսնամյա ստեղծագործական բանավեճերի և նույնպիսի աշխատանքի:

Այժմ ներկայացնենք գործի պարունակությունը:

Ցուցակն ունի «Յառաջաբան» (հ. Դ, էջ Ա-ԽԷ, հ. Ե, էջ Ա-ԺԸ), նկարագրություն (Դ, սյուն 1-1336, Ե, սյուն 1-1016), «Թանկ անձնանուններու» (Դ, սյուն 1141—1222, Ե, սյուն 1169—1266), «Թանկ տեղանուններու» (Դ, սյուն 1223—1234, Ե, սյուն 1267—1276) և «Համապատկեր համեմատական տախտակներու», որ 1-10 առանձին էջահամարներով ներկայացնում է «Ընդհանուր տախտակ» և «Համեմատական տախտակ մատենադարանի եւ հրատարակութեան թիւերուն Դ. հատորին»:

Նախ անդրադառնանք նկարագրություններին՝ գործի հիմքին:

Դ հատորում նկարագրված է 139 շարական, 33 ճաշոց, 45 ժամագիրք, 31 խորհրդատետր, 18 մանրուսմունք, 3 կցուրդք. Ե հատորում՝ 34 հայամավուրք, 26 զանձարան, 42 տաղարան, 44 տոնացույց (ընդամենը՝ 415, որ բավական մոտ է առաջին երեք հատորի պարունակած ձեռագրերի՝ 456 քանակին):

Հայտնի է, որ առաջին երկու հատորը ցանկեր չունեն. նրանց բովանդակությունը գոնե աղյուսականման մի ցանկով ներկայացված չէ նաև մյուսների մեջ, ուստի այստեղ զնում ենք ամբողջ ցուցակի պարունակածը ներկայացնող մի պարզագույն պատկեր:

հ. Ա. Աստուածաշունչ	24 (Հմբբ 1—24)Վ
Սաղմոսարան	61 (Հմբբ 25—85)

3 Ե հատորն այս «տախտակները» չունի. հուսանք, որ այդ պակասը «աղիւսակներ» անունով լինելու է Զ հատորում: Սրա մյուս ցանկերի մասին կխօսենք մի փոքր հետո:

4 «Հմբ» կամ «Հմբբ»՝ դիտատառով սկսվող անձայնավոր համառոտումով արտահայտում ենք արեւելահայերեն «համար» բառը, որի փոխարեն մեղանում անխոհմարար սկսել են հարկի և անհարկի կիրառել միայն թիւս-ը, որ արեւելահայերենում ավելի շուտ ունի թվանշանի, քանակի, համարների իմաստ. ավելին՝ այս բառի մերժումով ինքնուրու մեղ զրկում ենք նրա տասնյակ բարդություններից և ածանցումներից (նման կլինեն, ԼԹ. «սպիտակ» բառից հրաժարվելիք և գործածելիք միայն «ճերմակ»-ը):

Աւետարան	106	(Հմբ 86—191)
Նոր կտակարան	8	(Հմբ 192—199)
Հ. Բ. Ճառքնտիր	40	(Հմբ 200—239)
Ոսկեփորիկ	54	(Հմբ 240—233)
Հաւաքումն րանից	23	(Հմբ 234—317)
Ժողովածու րանից	2	(Հմբ 318—319)
Հ. Գ. Մշտոց	120	(Հմբ 320—439)
Գիրք ձեռնագրութեանց	17	(Հմբ 440—456)
Հ. Դ. Շարականոց	139	(Հմբ 457—595)
Ճաշոց	33	(Հմբ 536—628)
Ժամագիրք	45	(Հմբ 623—673)
Խորհրդաւար	31	(Հմբ 674—704)
Մանրամունք	18	(Հմբ 605—722)
Կցուրդք	3	(Հմբ 723—725)
Հ. Ե. Յայտաւորք	34	(Հմբ 726—759)
Գանձարան	26	(Հմբ 760—785)
Տաղարան	42	(Հմբ 786—827)
Տօնացոյց	44	(Հմբ 828—871)

Նկարագրված կարեւոր և առավել արժեքավոր ձեռագրերը մեկ առ մեկ թվարկելը կամ նրանց արժանիքները ցուցադրելն անիմաստ է նախ այն պատճառով, որ նյութի կարգով կազմված ձեռագրացուցակն այդ նյութով զրադվող մասնագետի համար ինքնին լավագույն տեղեկատուն է: Այսպես, ներկա զարի ընթացքում մեր աստվածաշնչադիտությունը մեծ առաջ-ընթաց է ունեցել, հրապարակվել են կարեւոր՝ ուղենշային արժեք ունեցող աշխատություններ, նաև՝ ավելի ընդարձակ ընդգրկում և տարողություն ունեցող աստվածաշնչական ձեռագրացուցակներ, սակայն վեներտիկյան ցուցակի առաջին հատորը շարունակում է լինել հայերեն Աստվածաշնչով զրադվող մասնագետի առաջին տեղեկատուներից մեկը: Եվ այս ձեռագրացուցակի կարեւորագույն արժանիքը սա է՝ ներկա հատորներում արտահայտված նաև նրանով, որ կազմող հայտնի է իր ծիսադիտական հմտություններով և Շարականոց ժողովածուին վերաբերող հետազոտություններով: Վերջին հանգամանքի, նաև՝ վեներտիկի հավաքածուի ձեռագրերի առաջնակարգության շնորհիվ այս հատորների շատ նկարագրություններ կարող են նույն տեսակ ծիսական ժողովածուներ նկարագրողների համար լինել օրինակության նմուշ:

Քե՛ ձեռագրերի արտաքին հատկանիշները, թե՛ բովանդակությունը և թե՛ հիշատակարանները ներկայացված են տաշյանական 30 հարցանոց կարգով. նույն ոճով կրկնված են նաև անպատասխան մնացող հարցերը. շատ նկարագրողներ սա ավելորդ են համարում, բայց այսպես կազմված ցուցակներն ավելի դյուրեմակալի են. խոշոր գլխագրերով գրված հարցը (ԳՐԻՉ, ՄԱՂԿՈՂ և այլն) և նրա դիմացի «անյայտ» բացատրությունը կարգացողը՝ իր փնտրտուքը շարունակելու հարկ չի ունենում:

Առաջին՝ հնագույն և կատարյալ Շարականոցը (1286 թ., Սիս) նկարագրելով ամենայն մանրամասնությամբ, մյուսների բովանդակությունը ներկայացրել է հիմնականում այս, երբեմն՝ այլ Շարականոցների համապատասխան տեղիները հղելով: Սրանով առաջին հերթին դյուրացրել է ուսումնասիրողի գործը, երկրորդ հերթին՝ խուսափել ավելորդ կրկնություններից և ցուցակի անհարկի ուռճացումից: Նույն՝ արդարացի եղանակով նկարագրված են նաև մյուս ժողովածուները:

Հիշատակարանները ևս բերված են ավանդական եղանակով, նախ գրչության գլխավորը, ապա՝ ձեռագրի թերթերի հաջորդականության կարգով, մանր հիշատակագրությունները, վերջում՝ ժամանակագրական կարգով, հետագա հիշատակարանները: Երբեմն (ո՛չ կանոնավոր)

Յ Աստվածաշնչական ձեռագրացուցակների հիմնական մասի ցանկը տես 2. Ս. Ա. Ն. ա. յ. ա. Ն. Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., Հ. Բ, Երևան, 1976, էջ 342—3: Վերջերս հրատարակվեց նաև երկու երրորդով Օ. Եզանյանի աշխատասիրությամբ ստեղծված՝ «ԵՄՀԷ արքեպիսկոպոս Աճէմեան, Ցուցակ Աստուածաշունչ մատենի հայերէն ձեռագիրներուն, իղ-պոն, 1992» գիրքը, որ, սակայն, նույն եզանյանը կոչել էր «Ուղեցոյց» (ո՛չ Ցուցակ):

այլ՝ ընդհանուր շարվածքից բիշ տարբերվող տառատեսակով, պատմողական ոճի բացատրություններով վերջիններս սահմանադատված են առաջիններից: Սրանց փոխարեն, կարծում ենք, կարելի էր որդեգրել Մատենադարանի եղանակի՝ «Նախագաղափար օրինակի», «Գրությունն ժամանակի» և «Հետագայ» միօրինակ ենթախորագրերը: Սա սկզբունքի էական խախտում չէր լինի, ըստ այդմ է՝ մեծ աշխատանք չէր պահանջի. այսուհանդերձ, ասվածը վերաբերում է ձևին ու ձևավորմանը, ո՛չ բովանդակությանը:

Հետագա անթվական հիշատակարանները նկարագրությունների մեջ մոտավոր թվագրումներ չունեն. մի պահ թվում է, թե գործ ունենք Ն. արքեպ. Պողարյանի կազմած՝ Ծրուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի 11 հատորանոց կոթողային ցուցակի մի էական թերություն՝ հետ, սակայն առաջին իսկ ստուգումը փարատում է այդ կասկածը. հետագա հիշատակարանները թվագրված են անվանացանկերի մեջ. այսպես շմր 584 (469)՝ 1432 թ. Շարակնոցի մեջ՝ «247ր. Բնագրէն տարբեր բոլորգրով՝ կայ հետեւեալը. «Առաքել սուտ Գեղամեցի»: Անվանացանկի մեջ առ այս կա գերճշգրիտ հետեւալը. «Առաքել Գեղամեցի, ԺԶ-ԺԷ դ., էջ 112». սա 1589—1630 թթ. ընթացքում տասնյակ ձեռագրեր գրած ու նկարագրագրած գրիչ և ծաղկող Առաքել Գեղամացին է: Այս տեսակ բազմաթիվ օրինակներ ստուգելով համոզվեցինք, որ վրիպած հիշատակագրություն չկա՝ անվանացանկերի մեջ բոլորը թվագրված են: Առաքել Գեղամացու օրինակը հաստատում է Ծրուսաղեմի ձեռագրացուցակի առիթով ասվածն այն մասին, որ ձեռագրական աշխատանքի փորձ ունեցողի մոտավոր թվագրումը չթվագրելուց հազար անգամ նախընտրելի է. սակայն սրա հետ միաժամանակ նկատենք, որ թվագրումը պետք էր արտահայտել նախ նկարագրության մեջ, հետո միայն՝ անվանացանկում, քանզի այս եղանակով պատրաստված ցուցակի ընթերցողն անթվական հիշատակարանի ու հիշատակագրության թվագրումը կարող է գտնել միայն կրկնակի փնտրտուքով՝ անվանացանկի մեջ:

Արտաքին հանդամանքների շարքում կա «Յիշատակագրութիւն» հարցը, որի դիմաց տաշյանական եղանակով պետք էր նշանակել միայն հիշատակարանների ու հիշատակագրությունների էջահամարները: Սակայն այստեղ շեղում կա. ուշ շրջանի մանր հիշատակագրությունները (որոնք նաև ձեռագրի կենսագրության դրվագներն են) վերաշարադրանքով կամ նույնությամբ բերված են այստեղ. այսինքն՝ ձեռագրի ճակատագրով հետաքրքրվողը, ամբողջական պատկերացում ստանալու համար, պետք է հիշատակարաններն ու հիշատակագրությունները կարդա, ապա մի քանի էջ հետ դառնա և կարդա նաև «Յիշատակագրութիւն» հարցի պատասխանը: Կարծում ենք, որ բոլորը պետք էր սովորական ձևով, եղածի պես՝ նույնությամբ վերադրված «Յիշատակարան» բաժնում, իսկ «Յիշատակագրութիւն» բաժնում ըստ հարկի կարելի էր անել բոլորի հաղորդած տեղեկությունների համառոտ վերաշարադրանքով: Թվում է նաև, որ արժեք խախտել Բ. Սարգիսյանի հաստատած ավանդութիւնը և «Տեղեկութիւն» հարցի դիմաց ձեռագրի ստացման ժամանակի, անձանց ու հանգամանքների պարզաբանումից բացի, «Յիշատակարան» խորագրի ներքո վերադրված նույն տեղեկությունները հաղորդող՝ ձեռագրի մեջ փակցված առանձին թերթիկի կամ ուղղակի ձեռագրի թերթիկից մեկի վրա գրանցված հիշատակագրությունը: Այսպես օրինակ. մոտ ապագայում շմր 397 ժողովածուն նկարագրելիս, «Տեղեկութիւն» հարցին պատասխանած լինելով հանդերձ, արժե հիշատակագրությունների շարքում տպագրել նաև նրա կազմի Բ փեղկի ներսին փակցված թերթիկի ունեցածը՝ «Ջայս մատենան առաքեաց ի վանս Սրբոյն Ղազարու տէր Յովսէփ քահանայն Արթուրի, որ եկն և հաս առ մեզ յամի 1758»:

Նկարագրությունների դնահատումից և դրա ընթացքում արված դիտողություն-ցանկություններից հետո անցնենք ցուցակի վերջին բաժնին՝ ցանկերին: Հայտնի է, որ ինչքան ճոխ, բազմազան ու կատարյալ են ձեռագրացուցակի ցանկերը, նույնչափ մեծ է նույն ցուցակի մատուցած ծառայությունն ու արժեքը: Դ հատորի ցանկերի և տախտակների խորագրերն ու հարցակարգը տառացի ճշգրտությամբ փոխառնված են նախորդ՝ Գ. հատորից: Վերջինը,

6 Կան բազմաթիվ անթվական ձեռագրեր, որոնց մոտավոր թվագրում՝ կազմողը չի արել: մինչդեռ թղթի որակը և դրի տեսակն ու ոճը տեսած՝ տասնամյակների փորձ և իմացություններ ունեցող գիտնականի՝ անելիք մոտավոր թվագրումը շատ ավելի նախընտրելի կլիներ, քան այն անորոշությունը, որի մեջ հաճախակի ընկնում է այս մեծարժեք ցուցակի ընթերցողը:

7 Տախտակ բառը, որ այս տեղի համար այնքան էլ ճշգրիտ չէ, նաև հայեցի չէ. սա լատիններեն լածսա-ն է, որ այսպիսի կիրառությունների մեջ ավելի ճիշտ կլիներ արտահայտել հայերենի մի այլ հոմանիշով՝ աղյուսակով. իրականում ցուցակիս (և ընդհանրապես մեր ձեռագրերի) հոմանիշն է:

Կր ունի «Համեմատական տախտակ մատենագրարանի և հրատարակության թիվերուն Դ. հատորի», ավելի ճշգրիտ անունով կոչելի էր «Համեմատական աղիւսակ ձեռագիրներու գոյթահամարներու և ցուցակիս Դ. հատորի թիվերու», սա համարների պարզ դուգադիր աղյուսակ է, որ կրկնելով նրորդ հատորին, վերջնականապես հաստատում ու անհրաժեշտ է դարձնում անելու մի պարզարանում, որի նպատակը վերացումն է մեր բանասիրության մեջ առաջացող հետևյալ հանախաղակ շփոթի (պատճառը դույզ համարների համատեղ գոյությունն է)։ Վենետիկի Մխիթարյան մատենագրարանի ձեռագրերը նախաշնչի են այն համարներով, որոնք ձեռագրացուցակի առաջին նրկու հատորում կոչված են «Հին թիւ», իսկ Գ-Ն հատորների մեջ՝ ուղղակի «Թիւ»։ սրանցից և ձեռագրերի խորագրերից առաջ գրված խոշորագիր՝ թվանիշ համարները վերաբերում են սոսկ ցուցակին, այսինքն՝ միայն վերջինիս համարներն են և վերաբերում են նկարագրություններին (ո՛չ ձեռագրերին), Այսպես. «Վենետիկի ձեռ. Հմր 1266 (627)» պետք է նշանակի, թե Հմր 1266 ձեռագիրը ցուցակում 627-րդն է։ Կարելի է անգամ հիշատակել միայն առաջին թիվը՝ 1266, և ցուցակի համապատասխան հատորի էջերը (Դ, էջ 847—860), իսկ դեռևս նկարագրված ձեռագրերը (ասենք՝ 626) ունեն հենց միայն այդ համարը, որով և ընդհանուր դարակաշարում հնարավոր է լինում որևէ ձեռագիր գտնելը և որով այն հղելի է։

Շենդհանուր տախտակ աղյուսակն ունի ձեռագրացուցակների համար գրեթե սովորական դարձած հետևյալ հարցակարգը. ժամանակ, թիվ ձեռագրի, թիվ նոր (իմա՝ ձեռագրացուցակի), նյութ (բովանդակություն), գրիչ, ծաղկող ստացող, տեղի։ Ձեռագրերի շարակարգի հիմքն առաջին՝ ժամանակ հարցն է, որի շնորհիվ սա նախ ժամանակագրական ցանկ է և պարզում է հատորիս մեջ նկարագրված 269 ձեռագրի ժամանակագրական հետևյալ բաշխումը. Ժ-ԺԱ դդ.՝ 1 միավոր, ԺԱ-ԺԲ դդ.՝ 2, ԺԲ դ.՝ 1, ԺԳ դ.՝ 7 (3-ը անթվական), ԺԴ-ԺԵ դդ.՝ 4, ԺԶ դ.՝ 37 (14-ը անթվական), ԺԷ-ԺԸ դդ.՝ 6, ԺԹ, դ.՝ 37 (17-ը անթվական), ԺՆ-ԺՁ դդ.՝ 4, ԺՁ դ.՝ 45 (10-ը անթվական), ԺՂ-ԺԳ դդ.՝ 9, ԺԿ դ.՝ 81 (22-ը անթվական), ԺԷ-ԺԸ դդ.՝ 4, ԺԸ դ.՝ 21 (10-ը անթվական), ԺԹ դ.՝ 9 (4-ը անթվական), Ի դ.՝ 1։ Այսինքն՝ հատորս, ընդգրկելով հանդերձ մեր ձեռագրական ժառանգության միայն մի փոքր մասը, իր հերթին հաստատում է նրա օրինաչափություններից շատերը, որոնց շարքում նաև այն, որ մեր պահպանված ձեռագրերի շուրջ մեկ երրորդը վերաբերում է գրական մշակույթի առումով արդյունաշատ ԺԿ դարին. կիսով կամ ավելի նրանից պակաս են նախորդ՝ ԺՁ, ԺԸ և ԺԳ դարերը, իսկ ԺԸ դարը նվազման շրջանն է, ԺԹ դարը՝ անկման։

Անվանացանկերին վերաբերող մեր առաջին զնահատականը հետևողական բարեխղճության և դրա շնորհիվ ստացված կատարելության արձանագրումն է. ընդգրկված են նկարագրությունների մեջ հիշատակված անդամ ռաննշանա (հիշենք, որ սա չափազանց հարաբերական է) անունները. բոլոր անունները ցանկերի մեջ վերադարձվել են նշանակում է, որ հատորի պարունակած ամբողջ նյութն անմնացորդ գործածական է հետազոտող-ընթերցողի համար։ Վերհիշենք, որ Վենետիկի ցուցակի առաջին նրկու հատորի հեղինակ Բ. Սարգիսյանը միամիտ լավատեսությամբ կարծում էր, թե ինքը կազմելու է նաև վերջինը, որի մեջ էլ գնելու է բոլոր ցանկերը, այդ պատճառով էլ նրա հատորները ցանկադուրկ են և գրեթե անգործածելի (մի անուն գտնելու համար պետք է կարգալ մամրոջ հատորը)։ Մի այլ փաստ. նորայր արքայազ. Պողարյանի կազմած կոթողային ցուցակի (3890 ձեռագիր) ցանկերում անունները նշված են ընտրությամբ. նշանակում է, թե հեռավորագրի ցանկացած փնտրտուքի արդյունքը պակասներ ու վրիպումներ կունենա։

Ընդգրկման իմաստով ցանկերի կատարելությունը հաստատույց հետո նկատենք, որ ճիշտ է, Դ հատորը կազմվել է 25 տարի առաջ, բայց ցանկերն ստեղծվել են բուն նկարագրությունները շարելուց հետո։ Ուրեմն՝ լրացուցիչ ցանկերի կազմումը նկարագրության սկզբունքների փոփոխություն չէր և շատ չէր ուշացնելու վաղուց սպասվող հատորը, այսինքն՝ այս գեղարված դուցն հեղինակն ավելի ճիշտ վարվել, և թե մի փոքր շեղվել իր նախորդի (Գ. Սարգիսյանի) դժած շավղից և Մաշտոցյան Մատենագրարանի Մարց ցուցակի ոճին հետևելով, իր հատորի ցանկերն ավելացնել գոնե նրկու անհրաժեշտով. ընախապագափար և ձեռագրայ յիշատա-

ռագրացուցակներին) այսպիսի հավելվածներ սյունակների բաժանված աղյուսակներ են։ Իսկական զավեշտ է, կրթ գեղանկարչությանը կամ մանրանկարչությանը վերաբերող ուսումնասիրություններին իբրև հավելված կցված նկարները, պարզ ճշտանկարա կամ հենց ճեղքա անունն ստանալու փոխարեն, բնորոշվում են նույն գտախտակով՝ տափակ բառով։

կարանների ժամանակագրական» և «Մանրանկարների» Առաջինը մեծապես դուրացնելու էր պատմական փաստեր ու հիշատակներ փնտրողների և հիշատակարանների ժողովածուներ կազմողների, նրկորդը՝ մանրանկարչության մասնագետների աշխատանքը. վերջինիս կարևորությունը մեծ է հատկապես այն պատճառով, որ մինչև այժմ մեր միջնադարյան գեղանկարչության պատկերազրույթումը ներկայացվել է հիմնականում ավետարանների միօրինակ պատկերաշարերով:

Ե հատորի ցանկերի մեծ մասն արդյունք է նյութի թևադրանքով առաջնորդվելով՝ սովորական կաղապարներից շեղվելու. «Տաղերու եւ գանձերու հեղինակներ», «Տաղեր եւ գանձեր տէրունական տօներու», «Տաղեր եւ գանձեր նուիրուած սուրբերու», «Տաղեր եւ գանձեր աշխարհիկ նիւթերու», «Տաղերու եւ գանձերու այբբենական ցանկ» (սյուն 1081—1168): Առկա նյութը ձեռագրերի և նրանց պարունակած միավորների քանակով բավական առատ է (26 Գանձարանն ու 42 Տաղարանն ունեն 5053 նյութ) և ժամանակագրորեն հին (ԺԳ-ԺԷ դդ.). ու քանի որ այդ ամբողջը ներկայացված է այսպիսի հանդամանալի ցանկերով, ապա մեր միջնադարյան շափածո գրականության բոլոր ուսումնասիրողների առաջին տեղեկատուն արդեն այս հատորն է:

Թե՛ Բ. Սարգիսյանի և թե՛ Ս. Զեմճեմյանի «Ցառաջարաններ» մեջ (Ա, էջ ԺԲ, ԺԸ. Դ, էջ ԽԶ-ԽԷ), հիշատակված է «Ազերեան ցուցակ» անունով մի գործ. բայց երկու դեպքում էլ՝ առանձին և բոլորին հայտնի իրողության մասին ասելու չափ հարեանցի, մինչդեռ վստահաբար գիտենք, որ նրա մասին հայագիտության մեջ այլ բան չի գրվել և որ հայաստանաբնակ ձեռագրագետները չգիտեն՝ ինչ ասել է «Ազերեան ցուցակ»: Ուստի, քանի որ այն տեսնելու և օգտագործելու առիթ ենք ունեցել, հնարավոր համառոտությամբ պատկերացում տանք նրա մասին, հընթացս նաև պարզելով մեր ձեռագրերի գիտական ցուցակագրության պատմության համար ո՛չ անկարևոր այն հարցը, թե ինչո՞ւ մեծ հավաքածուներից միայն Վենետիկին է կազմվել ձեռագրերի պարունակած նյութի կարգով (առարկայական սկզբունքով). փաստ, որի սկզբնապատճառը, մեր համոզմամբ, «Ազերեան ցուցակն» է: ԺԸ դ. ամբողջ ընթացքում Մխիթար արքահոր և նրա հաջորդների ջանքերով հավաքված ձեռագրերն ըստ Բ. Սարգիսյանի՝ 600 միավոր էին (Ա, էջ ԺԸ), ըստ Ս. Զեմճեմյանի՝ 650 (Դ, էջ ԽԶ): Երկու տարի շարունակ աշխատելով, 1791 թ. առաջին անգամ դրանք ցուցակագրեց Մկրտիչ վ. Ավգերյանը, որին օգնում էին իր դասընկեր վեց քահանա, վանքի ընծայադանի 8 ավագ և 12 կրտսեր աշակերտ. ստացվեց խստիվ առարկայական-այբբենական կարգով կազմված, սովորական միջին չափի ձեռագիր Ցայսմաուրբի նման մի մեծադիր հատոր, որի մեջ ամեն նյութից հետո տեղ էր թողնված հետագա լրացումների համար (որ և արվել է): Այսպես. Ա գրի տակ պետք էր նախ գտնել՝ «Արգարու արքայի թուղթ առ Քրիստոս փրկիչ և պատասխանի. Ոսկեփորիկ Ա, էջ 88» նշումը, ապա՝ Ո գրի ներքո պարզել, որ Ա Ոսկեփորիկը «57 Թ. գ. 8 ձեռագիրն է՝ «նօտր, մեծ, ճոխագուն»: Այժմ, անշուշտ, նույն բնագիրը կարելի է գտնել նաև տպագիր ցուցակի Բ հատորում և համոզվել, որ Ավգերյանի մատնանշումը ճշգրիտ է, բայց այդ եղանակով (2 տարում 650 ձեռագիր) ցուցակագրելիս հնարավոր էր ջատ բան վրիպել, որ և եղել է. հետագա լրացումներն էլ արվել են ո՛չ միօրինակ բարեխղճությամբ: Միաժամանակ, նրանից օգտվողը նախ պետք է իմանա, որ գոյություն ունի «Բիւզանդիոնի պատմութիւն» անունով մի բնագիր, ապա այս ցուցակում փնտրի և սկզբում ճշտի, որ դա է ի «Ոսկեփորիկ» Դ, [էջ] 127», ապա՝ որ սա էլ «347 Ը. ք. նօտր[գիր] և բոլոր[գիր]» ձեռագիրն է, հետո միայն կարողանա դարակից վերցնել այն: Այս ձևով երբեմն հարկ է լինում անցնելու փրենտերտուքի երեք կամ չորս աստիճան: Բացի դրանից, ձեռագրապահոցից դուրս չբերվող գույքամատյանն անհնար ու անկարելի է որևէ մասնագետ ընթերցողի տրամադրելը, քանզի Ավգերյանի ցուցակը ներքին գործածության համար նախատեսված գույքամատյան է: Ինչպես ասացինք, ձեռագրերի պարունակած նյութերի մի մասն էլ մնում է շնկատված և չճանաչված: Բայց սա հարցի դեռևս մի կողմն է. մյուսն այն է, որ սրա սկզբունքը որդեգրած տպագիր ձեռագրացուցակը, իր բազմաթիվ արժանիքներն ունենալով հանդերձ, հարկազրկված է ունենալու նաև մի էական թերություն: Այսպես. նշեցինք, որ Բ. Սարգիսյանի կազմած Ա հատորը հայերեն Աստվածաշնչով դրազվող մասնագետի լավագույն տեղեկատուներից է, սակայն

8 ձեռագրերը դասավորված են եղել ո՛չ թե համարների, այլ՝ մեծության և հարմարության կարգով. «Թ» գիրն այստեղ հին՝ այժմ գոյություն չունեցող դասավորության պահանջների, իսկ «դ»-ն՝ նրա դարակի համարներն են:

վստահ ենք ասելու նաև, որ նրա տպագրության՝ 1914 թ. հետո Մխիթարյան մատենադարանի ստացած՝ Աստվածաշունչ, Սաղմոսարան, Ավետարան և նոր կտակարան անուններն ունեցող ձեռագրերը պետք է նկարագրվեն ամենավերջում մի լրացուցիչ հատորի մեջ, Պատկերի խճուկումն ավելի ակնհայտ կդառնա, եթե հիշենք նաև վրդպույմների հնարավորությունը. նույն Ավդերյան ցուցակով պարզել ենք գոյությունն Աստվածաշունչ կամ նրա մասեր պարունակող 20 ձեռագրի, որ, բնականաբար, չկան Ռ. Սարգիսյանի նկարագրած 24 Աստվածաշնչերի շարքում: Այս պատճառով էլ չենք կտրող մեղադրել Գ հատորի կազմող Ս. Ժեմսեմյանին, որ իր նկարագրած ճաշոցների շարքը չունի 34-րդը՝ Հմր 1039՝ «Ճաշոց լատինաց և մասն Մաշտոցի ձեռագիրը, որ Գ հատորի հավելվածում (էջ 657—676) նկարագրված է ցուցակի համարակարգից դուրս, միայն կիսով (պարունակած Մաշտոցի չափով): Նույն հավելվածում կա կրթիկն կիսով նկարագրված (Մաշտոցի մասեր ունեցող) երեք «Տօնացոյց» էլի դարձանալի չէ, որ Ե հատորի տոնացոյցների շարքում չկան նրանց (Հմր 686, 1372, 1501) տոնացոյց մասերի նկարագրությունները. բանի որ սրանք չկան նաև ցուցակի համարների շարքում, ուստի սպասելու են վերջին՝ հավելվածային հատորում նկարագրվելու պահին:

Վերջում, այսպիսի վրդպույմների պատճառով, ձեռագրերի իրական և ցուցակում նկարագրված բանակները կարող են իրար չհամապատասխանել:

Այսուհանդերձ, թեև Ավդերյան ցուցակը պատրաստված է որպես ներքին գործածության դուրսացուցակ, բայց սա հայերեն առաջին գիտական ձեռագրացուցակն է (բնականաբար, նկատի չունենք ձեռագրերում առկա՝ «Սաղմոսականից գրեանք այս են», «Աբրահամ վարդապետի գրեանք» խորագրերով տասնյակ ցուցակները): Ըստ այսմ էլ մտածում ենք, որ ռուսերովին անտեղի էլ լինի մոտ ապագայում «Բաղմավէպ»-ի էջերում, անհրաժեշտ ծանոթություններով, տպագրեն այս ցուցակի («որ առանձին ձեռագիր մըն է, երբեմն աւելի հին՝ քան հոն նշանակուած ձեռագիրները» — Ա, էջ ԽԶ) ունեցած «ընդարձակ յառաջարան»-ի, որը կը բացատրուի թէ ի՞նչ դրուժևամբ կադմուած է Յուցակը և թէ յաջորդաբար պատասխանատու Գրապետներ՝ ի՞նչ ոճով պէտք են շարունակել, որպէսզի դոժը ստանայ շարունակական ընդթ, դիւրաւ օգտագործելու և կարենալ գտնելու համար հոն փնտռուածը (Դ, էջ ԽԷ): Սրա հիման վրա կարելի է սկսել հայերեն ձեռագրերի գիտական ցուցակագրության պատմության շարադրանքը:

Կարևոր ասելիքը գրավոր խոսքի վերջին թողնելը լավ ևղանակ է. այդ կարևորն այս գեպում կադմողի հմտայից «Յառաջարանն» է (հ. Դ, էջ Ա-ԽԷ, հ. Ե, էջ Ա-ԺԸ), որի կարիքը հայագիտությունը վաղուց էր դդում, որովհետև այն Մխիթարյան հավաքածուի դուրսման առաջին շրջանի՝ 1701—1825 թթ. պատմությունն է: Այս շարագրանքի գաղափարն ունեցել է գեղեցիկ Ռ. Սարգիսյանը (Ա էջ ԺԲ), բայց հանդիպել է բաղմաթիվ դժվարությունների. նախ՝ նա նկարագրել էր իր օրերին վանքի ունեցած 2200-ից ավելի միավոր ունեցող հավաքածուի «չորրորդ մասը հադիւս», իսկ մնացածին ծանոթ չէր. ձեռագրերի մեծ մասի մեջ նրանց ծագումը պարզաբանող մակագրություն չկա, Ավդերյան ցուցակի գրառումներն էլ, տարբեր մարդկանց՝ ձեռքով արված լինելու պատճառով, նույն հետևողականությունն ու միօրինակությունը չունեն, ուստի հարկադրվել է «ընդհանուր ձեռագրաց պատկանող պատմական այդ գերը վերապահել Մայր ցուցակիս վերջին հատորին, եթէ Տէրը կամենայ...» (ն. տ.): Առայժմ մեր ձեռքին Մխիթարյան ձեռագրացուցակի վերջին հատորը չէ, բայց այժմ ևս նկարագրված է այդ հավաքածուի բառորդ մասից մի փոքր ավելին (3200-ից՝ 871-ը): Սակայն այդ պատմության մի կարևոր մասը շարագրված է շնորհիվ այն բանի, որ հատորիս կադմողն ունի նաև սովորաբար չընկալող մի մեծ վաստակ. նա ծայրեծայր նայել, մեծ մասամբ կարդացել, կանոնավորել ու բարտադրել է վանքի երեքդարյա գիվանը, որի փաստաթղթերի մի մեծ մասն էլ վերաբերում է ձեռագրերի ծրագրված փնտրութեին և ձեռքերմանը: Իրեն հատուկ վարպետություն միահյուսելով ձեռագրերի մեջ առկա հիշատակագրությունների, դիվանի նամականիների և Ավդերյան ցուցակի տվյալները, նույնպիսի հմտությամբ նա գծել է մխիթարյան բնութագրույն հավաքածուի դուրսման պատմության առաջին շրջանի պատկերը: Ընտել առ անուն ներկայացված են ջանքերն ու արդյունքները Մխիթար Աբրահամ, Սահմանեսս արքա Մելքոնյանի, Ղուկաս Սերաստացու, Մկրտիչ Անանյանի, Վրթանես Ասկերյանի, Միրայել Չամչյանի, Գարրիկ Ավետիսյանի, Հովհաննես Զոհրաբյանի, Ղուկաս Ինճիճյանի, Գերրդ Պալատցի Տեր-

8 Պետք է հաշվել՝ գոնե 550, բայց առաջին երեք հատորում տպագրված է նրա արած ընդամենը 365 նկարագրություն. այս անհամապատասխանությունը բացատրել չենք կարող:

Հովհաննիսյանի, Ստեփանոս Աղոնցի, Մկրտիչ Ավդերյանի, Իդնատիոս Փափազյանի, Պետրոս Ապաղյանի, Հարություն Ավդերյանի, Սրապիոն Պուրիսյանի, Կարապետ Եսայանի, Եղիազար Տյուզյանի, Մինաս Տեր-Պետրոսյանի, Հյուսիսյան ընտանիքի և միարանությունների ու ղեկավարների ու համակիրների՝ Այստեղից իմանում ենք, որ կազմողն առանձին մենագրություն մը նուիրած է Գեորգ Պալատեցու և Մխիթարյան միարանության միջև ստեղծուած զօթինն, ուր դրվազ առ դրվազ ստեղծվելու է, թե ինչպես որն էլ ընագրի հետադրուածն ու հրապարակման՝ Մխիթարյան գիտական ընկերութեան առաջացած գաղափարն իրագործելի էր դառնում Պոլսում ապրող դպրի ջանքերով՝ որն էլ խորշից գտնվող ձեռագրով, Կարնոր է նաև այն, որ ձեռագրաբանին վերջը խոստում ունի. «Ձեռագրիներուն աճը ժխտարան մէջ կրկնապատիկ արագութիւն ստացած է, և հաւաքածուն ճոխացած է շատ աւելի հարուստ զանձերով»։ սակայն այս շրջանի պատմությունը հյուսելու համար հեղինակը թեր կարօտի ժամանակի եւ աշխատութեան, որպէսզի աճի ալ հիսուելով՝ ունենանք ամբողջական պատկերը և պատմութիւնը մեր Մատենադարանին (Դ, էջ Խէ)։ Ինչպես այստե՛ղ կա Աստվածաշնչի 'ձեռագրերն ձեռք բերելու համար գործադրված անդուլ ջանքերի¹⁰ պատկերը, նույնպես և շարունակութեան մեջ լինելու է նոր հայկազյան բառարանի աղբյուրների հավաքման և, որ ավելի կարևոր է, մեծանուն Ղ. Ալիշանի ու իր Մարգար եղբոր ընդուն գործակցութեամբ մատենադարանի հարստացման երեսնամյա շրջանը (1872—1901 թթ.)։ Ավելացնենք, որ տարիներ առաջ մեր հեղինակն արդեն լուսարանել է Մխիթարյան հավաքածուի պատմության այս շրջանի մի էջը¹¹։

Ստիպված ենք անելու մի թվացյալ շեղում եւ և հնարաւոր համառոտութեամբ անդրադառնալու ձեռագրաբանին առթած մի կարևոր խնդրի. հայաստանյան գիտական մամուլում վերջերս արծարծվեց նարեկացու Մատյանի ինքնագրի գոյութեան խնդիրը¹² և, բնականաբար, մնաց անլուծելի. Դ. հատորը (էջ ԺԲ) ունի սրան վերաբերող մի նորություն. բաղված է Հակովորոս Չամչյանի՝ արքահոգին ուղղած նամակի (1769 թ. Հունիսի 1, Պոլիս)՝ հետևյալը պատմող հատվածը. Գասպար Մուրադյանից իմացել է, թէ Մշո Ս. Կարապետ վանքում թեկա հնադարյան ձեռագրի նարեկ, դրմէլ ասեն լինել 'ձեռագրերն նոյն սրբոյն', և՛ առաքելի անդր զմի նարեկ տպագրեալ, և՛ գտարբերութիւնսն նշանեցին անդէն և՛ առաքելի առ իսն¹³։ Ս. Ժեմճեմյանն այս առթիվ տարակուսել է. «Ձենք դիտեր... հասա՞ծ է Ս. Ղազար խոստացուած նարեկան օրինակը, քանի Աւգերեան ցուցակին մէջ չենք գտնել անոր հետքը»։ Քանի որ 2. Չամչյանի Մուշ ուղարկած և նշանակված տարբերություններով ետ ստացած օրինակը տպագրի էր՝ կարծում ենք, որ փնտրտուքն արժեք շարունակել Մխիթարյան մատենադարանի հնատիպ գրքերի մեջ, եթե, իհարկե, 1975 թ. շարադետ հրդեհը չի ճարակել նաև աճի դիրքը։

Ո՛ր անտեղի մի ցանկություն եւ. հավաքածուի ղոյացման պատմությունն ամբողջացնելուց հետո՝ վերջում, արժեք տալ ձեռագրերի ծագման աղբյուրակաձե ցանկ (այսպես ասած՝ Տախտակ), որի մեր պատկերացրած հարցակարգն այս է. 1. Համար (թիւ) ձեռագրի, 2. Համար ցուցակի, 3. Անուն (ընկերակցություն) ձեռագրի, 4. Ժամանակ ձեռագրի, 5. Ժամանակ ստացման, 6. Նվիրատու, 7. Բերող, 8. Տեղը, որից բերվել է, 9. Աղբյուրն այս տեղեկությունների (Ավդերյան ցուցակ, ձեռագրի մեջ եղած թերթիկ, Դիվանի վավերագրի և այլն)։ Եվ՝ վերջինը. քանի որ առաջաբանում հիշատակված են տպագրված հատորների մեջ չնկարագրված բազմաթիվ ձեռագրերի պարունակած երկերի հեղինակների ու նրանց գործերի անուններ, ապա ցանկալի էր այստեղ եղած (նաև՝ ձեռագրերի հավաքմանը մասնակցած մարդկանց)

10 Հայտնի է, որ սրա արդյունքը եղավ 2. վ. Զոհրարյանի աշխատասիրած՝ հայերեն Աստվածաշնչի բնագրի առաջին ձեռագրական տպագրությունը (Վենետիկ, 1805), որի վրա հիմնված է նաև Ա. Բազարյանու կազմած առաջին և առայժմ միակ քննական (Վենետիկ, 1860) հրատարակությունը։

11 Տե՛ս 2. Ս ա հ ա կ Ճ հ մ ճ ե մ ե ա ն. 2. Ներսէս Սարգիսեանի ուղեորութիւնը դէպի Փոքր և Մեծ Հայք (1843—1853). Վենետիկ—Ս. Ղազար, 1974 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», 6)։

12 Տե՛ս Ե. Ն ա դ ար յ ա ն. Գրիգոր Նարեկացու ռՄատան ողբերգութեանն երկի ինքնագրի հարցի մասին.—ՊՔԶ, 1987, № 4, էջ 104—112։

13 Տե՛ս 2. Ղ ե ո ն դ Տ ա յ ե ա ն. Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի Ս. Ղազար (1707—1773). Վենետիկ, 1930, էջ 257 (ընդգծումները մերն են)։ Գրախոսվող հատորի ձեռագրաբանին մեջ օգտագործված փաստաթղթերի շատերի հետ՝ հիշյալ նամակը եւ այս տեղ տպագրված է գրեթե ամբողջությամբ։

անուններն արտահայտել անվանացանկերի մեջ. կամ՝ գուցե վեցերորդ հատորում կազմվի «Ցառաչարանի» մի առանձին անվանացանկ:

Կարծում ենք՝ Մխիթարյան միարանությունը տևոր է շարունակի նաև Ղ. Տալանի սկսած «Մայր դիանի» հրապարակությունը: Եթե Դիվանի կարգաւորումն արել է Ս. Զեմճեմյանը, որ, սակայն, ամեն ինչ թերթին եւ ինքեամբ հասցնել չի կարող, ապա ասված շարունակությունը կարող է անել որեւէ երիտասարդ միարան:

Ցառաչարանի մեջ մի քանի անգամ հիշատակված է նաև վաճառի ժամանակագրությունը. մեր ոչ այնքան կատարյալ իմացությամբ՝ սրա առաջին հեղինակը կրկին Մ. Ավգերյան մեծավաստակ վարդապետն է. սկիզբը՝ վաճառի դիվանի փաստաթղթերով, իր ժամանակներում կատարվածը՝ օրը օրին գրանցելով, մի սովոր հատորի մեջ շարադրել է մի ամբողջ գարի (1700—1800 թթ.) անցած-գարձածը: Շարունակության հեղինակն էլ Ս. Զեմճեմյանն է. նախ նույնպիսի մեծադիր հատորի մեջ մեկիկ-մեկիկ ձևերով նշանակելով, ապա՝ իրենից անբաժան փոքրիկ համակարգչի մեջ մուծելով, Ավգերյանի թողած տեղից ժամանակագրությունը հասցրել է մեր օրերին: Հատկապես հայ մշակույթի, ո՛չ փոքր չափով նաև քաղաքական պատմության համար եղանակի տեղեկություններ պարունակող այս աշխատությունը նույնպես արժանի է մի օր հրատարակվելու (անշուշտ՝ հատվածաբար, մի կողմ թողնելով ընդհանուր հետաքրքրություն չունեցող՝ միարանության ներքին կյանքին վերաբերող դրվագները):

Տարատեսակ և աշխատատար այս առաջարկներն անելիս շնք մոռանում, որ հատորիս բոլոր ցանկերն առանձնական ձեգերով ստեղծել է նույն Ս. Զեմճեմյանը, որ, սակայն, ունի մի մարդու համար չափազանց շատ եղբայրներ ու այլ պատասխանատուներ (միաբանություն աթոռակալ, վաճառի ընծայարանի տեսուչ և առօրյա բազմազան ու բազմապիսի, նախատեսված ու շնախատեսված գործեր)¹⁴, Այս պատճառով էլ նա առաջադրել է իր ցանկերի և նորագույն եղանակի պահանջների անհամապատասխանության հետևյալը լուծումը. «Այդ ցանկերը կարելի է, հեռավոր ապագայի մը մէջ, երբ ամբողջանայ Մատենադարանիս բոլոր ձեռագիրներու ցանկերու հրատարակութիւնը, պատրաստել առանձին հատորով, հոն ամփոփելով բազմաթիւ ծանօթութիւններ և տուեալներ» (Ա, էջ Ա):

Այս առիթով անում ենք ուշադրավ թվացող մի նոր առաջարկ, որ այս անգամ ուղղված է ո՛չ իրեն, ո՛չ իր միաբանությանը, այլ՝ դուցե, Մաշտոցյան Մատենադարանին:

Ցուսանք, որ մի օր Երուսաղեմի ցուցակին մոտ արագությամբ տպվելու են թէ՛ Մաշտոցյան Մատենադարանի և թէ՛ Վենետիկի Մխիթարյան Մայր ցուցակների հաշորդ հատորները. սրանց ամբողջանալուց առաջ սետք է որ արդեն հրատարակված լինեն պատշաճ մասնաբաժնությամբ կազմված՝ Փարիզի, Ս. Պետերբուրգի, Անդլիսի, Ֆրանսիայի և Իտալիայի գավառական քաղաքների գրադարանների ունեցած, նաև՝ Եվրոպայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների աճուրդներում ու գրավաճառանոցներում թափառող հայերեն ձեռագրերի ցուցակները: Բայց այս հսկա աշխատանքին դուգահեռ Երևանում պետք է մշակվեն հայերեն ձեռագրերի երկրորդ աստիճանի մատենագիտության՝ ժուցակների ցուցակի, այլ կերպ՝ Ցուցակների ցանկերը պարունակող հատորաշարի կազմության սկզբունքները, որի առաջին քայլը լինելու է բոլոր ձեռագրացուցակների համառոտագրությունների հստակ համակարգի ստեղծումը. թվում է՝ ամենայն լրջությամբ քննելի է նաև ցանկերի քանակն ընդլայնելու խնդիրը. անպայման պետք է կազմվեն նաև բնագրերի սկզբնատողների և նման այլ մանրակրկիտ ցանկեր: Պետք է հաշվի առնել նաև զոյություն ունեցող՝ լատինալիզու ձեռագրերի ցուցակների այսպիսի ցանկերի հատորաշարերի փորձը: Սա, իհարկե, մեկ կամ մի քանի հոգու կամ մի քանի տարվա գործ չէ, բայց բարեբախտություն համարենք գոնե այն, որ այս աշխատանքը նույնպես արվելու է մեքենայական եղանակով:

Իսկ մինչ այդ՝ հրատարակվելիք ամեն մի ձեռագրացուցակ պետք է լինի այն մեծ գործի անհրաժեշտ ատաղձը՝ զոր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ՝ ի կատարումն բովանդակութեանս¹⁵, Եվ այսպիսի ամեն մի թաղիւսի, նաև՝ մեր ներկայացրած բարձրորակ ցուցակի հեղինակ Հ. Սահակ Զեմճեմյանը, արժանի է ամենայն երախտիքի ու երախտագիտության:

Գ. Հ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

¹⁴ Եթե միաբանությունն ի վիճակի լիներ իր այս մի անդամին ընծայելու միայն գիտությունը (ինչպես ժամանակին՝ Ալիշանին), ապա նա կուտակած պաշար շատ ունի, հայագիտությանն էլ՝ բազմաթիվ տալիքներ:

¹⁵ Թ ու զ ա ն դ, Գ, ա: